ԱՍԳ-ի իրականացման առաջընթացի գնահատում և նոր պարտավորությունների պատրաստակամությունը Կլիմայի հարմարվողականության ծրագրերում առաջացող մարտահրավերները

Երևան 2024թ

«Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ն սույն վերլուծությունը կատարել է «Համայնքների հզորացում Հայաստանում կլիմայական քաղաքականության իրականացմանը մասնակցության և իրազեկման միջոցով» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Հայնրիխ Բյոլ հիմնադրամի Հարավային Կովկասի տարածաշրջանի երևանյան գրասենյակի հետ համագործակցությամբ:

Վերլուծության բովանդակության համար պատասխանատու է միայն հեղինակը, և այն որևէ կերպ չի կարող ընկալվել որպես Հայնրիխ Բյոլ հիմնադրամի Հարավային Կովկասի տարածաշրջանի երևանյան գրասենյակի տեսակետ:

Բովանդակություն

1. ՀՀ ԱՍԳ-ի իրականացման առաջընթացի գնահատում և նոր պարտավորությունների պատրաստակամությունը----------4
2. «Կլիմայի հարմարվողականության ծրագրերում առաջացող մարտահրավերները»----------12

Հապավումներ

ԱՄՆԳ	Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողություններ
ԱՍԳ	Ազգային սահմանված գործողություններ
Գգ	գիգագրամ (10^9 գ կամ հազար տ)
ԿՓ	Կլիմայի փոփոխություն
ՋԳ	Ջերմոցային գազեր
ՄԱԿ ԿՓՇԿ	Միավորված ազգերի կազմակերպության Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիա
ՀՇ	Հարմարվողականության ծրագիր
ՀԱՇ	Հարմարվողականության ազգային ծրագիր
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԿՍՊ	Կոորպորատիվ սոցիալական պարտավորություն
ՓՀ	Փարիզյան համաձայնագիր
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին

(**ՋԳ-ՑԱՋԵՌ**) Ջերմոցային գազեր - ցածր արտանետումներով երկարաժամկետ ռազմավարություն

ՀՀ ԱՍԳ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՆՈՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Նախապատմություն

ՀՀ կառավարությունը 2015թ. սեպտեմբերի 10-ի թիվ 41 արձանագրային որոշմամբ հաստատել է ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունները (INDC) և այն ներկայացրել ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի քարտուղարություն: Այս փաստաթղթով ՀՀ-ն ներկայացնում էր ՓՀ-ի ներքո ստանձնած իր պարտավորությունները:

2015թ. ԱՄՆԳ-ով Հայաստանը պարտավորություն է ստանձնել հետամուտ լինել տնտեսության բոլոր ոլորտներում մեղմման միջոցառումների ձեռնարկմանը՝ ձգտելով 2050թ. հասնել մեկ շնչի հաշվով զուտ արտանետումների 2.07 տ CO_2 համ. ցուցանիշի՝ ֆինանսական, տեխնոլոգիական և կարողությունների զարգացմանն ուղղված միջազգային բավականաչափ աջակցության առկայության դեպքում:

2017թ. փետրվարին ՓՀ-ի վավերացմամբ Հայաստանի ԱՄՆԳ-ն դարձավ Ազգային մակարդակով սահմանված գործողություններ/ներդրումներ (ԱՍԳ/NDC) 2015-2050թթ. ժամանակահատվածի համար:

2019 թ. սեպտեմբերին ՄԱԿ-ի Կլիմայի գործողությունների գագաթնաժողովում շատ պետությունների առաջնորդներ և կառավարությունների ղեկավարներ հայտարարեցին իրենց 2015թ. ԱՍԳ-ները 2020թ. վերանայելու կամ կատարելագործելու մտադրության մասին:

Հայաստանի համար 2015թ. ԱՄՆԳ վերանայման կարևորությունը հետևյալի մեջ էր.

- ԱՍԳ-ները համապատասխանեցնել Կատովիցեում ընդունված ուղեցույցներին և 2021-2030թթ. ժամանակային հորիզոնին
- սահմանել 2021-2030թթ. համար իրագործելի միջնաժամկետ նպատակներ
- թարմացնել ԱՄՆԳ-2015-ում ներառված տեղեկատվությունը և տվյալների հենքը՝ մասնավորապես, երկրի 4-րդ հաղորդագրության, երկամյա առաջընթացի 2-րդ հաշվետվության, վերջին հասանելի ջերմոցային գազերի ազգային գույքագրման արդյունքների ու ոլորտային նոր ռազմավարությունների ներկայացման առումով:

ՀՀ կառավարության 2021թ. ապրիլի 22-ին հաստատել է «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների ազգային մակարդակով սահմանված գործողությունները հաստատելու մասին» N-610-L որոշումը [1]: Հայաստանի Հանրապետության ԱՍԳ-ն ձևակերպվել է այն մոտեցմամբ, որ այն հնարավորություն կընձեռնի.
1) պահպանել գլոբալ միջին ջերմաստիճանի աճը մինչարդյունաբերական մակարդակից բարձր 2°C-ից զգալիորեն ցածր մակարդակում, և ջանքեր գործադրել

[1] https://www.e-gov.am/gov-decrees/item/36064/

ջերմաստիճանի աճը մինչարդյունաբերական մակարդակից բարձր 1.5°C-ից չգերազանցելու ուղղությամբ՝ գիտակցելով, որ այդպիսով հնարավոր է զգալիորեն նվազեցնել կլիմայի փոփոխության ռիսկերը և ազդեցությունները.
2) հետամուտ լինել Կոնվենցիայի նպատակի իրագործմանը՝ միաժամանակ առաջնորդվելով նրա սկզբունքներով, ներառյալ արդարության և ընդհանուր, բայց տարբերակված արտականությունների և համապատասխան հնարավորությունների սկզբունքով՝ հաշվի առնելով ազգային առանձնահատուկ պայմանները.
3) մեղմման և հարմարվողականության գործողություններում կիրառել էկոհամակարգային մոտեցում՝ նախապատվությունը տալով հավասարակշռված և համակցված գործողություններին:

Որոշման համաձայն ԱՍԳ ներդրման առաջին ցիկլի մեկնարկային տարին 2021թ. է:
Հաստատված ԱՍԳ-ում սահմանված է.
1) մինչև 2030թ. ՀՀ-ում ջերմոցային գազերի արտանետումները 1990թ. արտանետումների մակարդակի համեմատ կնվազեցվեն 40 տոկոսով: Նշենք, որ ջերմոցային գազերի արտանետումները 1990թ. կազմել են 25,855 Գգ CO_2 համ.:
2) ՀՀ առաջին ԱՍԳ 35-ամյա ժամանակաշրջանը կրճատվում է մինչև 10 տարի՝ 2015-2050թթ. փոխարեն դիտարկելով 2021-2030թթ.՝ ներդաշնակեցնելով ժամկետները մեծամասնություն կազմող երկրների ԱՍԳ ժամկետների հետ:
3) Հայաստանը պահպանում է մինչև 2050թ. մեղմման իր նպատակը՝ ջերմոցային գազերի արտանետումները նվազեցնել առավելագույնը 2.07 տ CO_2 համ. մեկ շնչի հաշվով, որը կարտահայտվի իր երկարաժամկետ, ցածր արտանետումներով զարգացման ռազմավարությունում:
4) Մինչև 2030 թ. Հայաստանը կրկնապատկելու է վերականգնվող էներգիայի մասնաբաժինը էներգիայի արտադրության մեջ ընթացիկ դարի երկրորդ կեսին կլիմայական չեզոքության հասնելու իր ճանապարհին:
5) Կարևորվել են կլիմայի փոփոխության հարմարվողականության քաղաքականությունը և միջոցառումները Հայաստանի սոցիալական և տնտեսական զարգացման նպատակներին հասնելու կարողության համար:
ԱՍԳ-ի մեղմման գործողություններում ընդգրկված ոլորտներն են.
ա. Էներգետիկա (ներառյալ էներգիայի արտադրություն և սպառում)
բ. Արդյունաբերական պրոցեսներ և արտադրանքի օգտագործում (հանքային արդյունաբերություն և F-գազեր)
գ. Գյուղատնտեսություն (աղիքային խմորում, ուղղակի և անուղղակի N_2O արտանետումներ կառավարվող հողերից)
դ. Թափոններ (կոշտ թափոնների կառավարում, կեղտաջրեր)
ե. Անտառային տնտեսություն (անտառապատում, անտառների պահպանություն) և այլ հողօգտագործում: Ընդգկելու է ՀՀ տնտեսության բոլոր ճյուղերը: Անտառի նոր ազգային ծրագրի ընդունմամբ նախատեսվում է անտառածածկի ավելացում՝ Հայաստանի տարածքի 12.9% չափով մինչև 2030թ.:

Ջերմոցային գազերի կրճատմանն ուղղված հաջորդ կարևորագույն փաստաթուղթը «Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարությունը (մինչև 2050 թվական) հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2023թ. դեկտեմբերի 28-ի N 2318-Լ որոշումն

է[2]: Փաստաթղթի ընդունումը ՓՀ-ի 4-րդ հոդվածով սահմանված պահանջի կատարումն է: Որոշումը նախանշում է տարբեր ոլորտներում ջերմոցային գազերի կրճատման թիրախները մինչև 2050թ. մի քանի սցենարներով:
ՀՀ 2019թ. ջերմոցային գազերի ազգային կադաստրում գերակշռում է ածխածնի երկօքսիդի (CO_2) արտանետումները, որի մասնաբաժինը ընդհանուր արտանետումներում կազմել է 55.7%, որին հաջորդում է մեթանը (CH_4)՝ 24.2% մասնաբաժնով, ազոտի ենթօքսիդին (N_2O) բաժին է ընկնում 11.4%, իսկ հիդրոֆտորածխածիններին (ՀՖԱ)՝ մոտ 8.7%:

«Էներգետիկա» ոլորտում ստանձնած հանձնառությունների կատարողականի գնահատում

ՀՀ-ում 2019թ. ըստ ՀՀ ջերմոցային գազերի ազգային կադաստրի 1990-2019թթ. հաշվետվության[3] արտանետումների գերակշիռ մասը՝ 64%-ն, առաջանում է «Էներգետիկա» ոլորտից, որը ներառում է այն բոլոր արտանետումները, որոնք առաջանում են էներգիա ստանալու համար վառելիքի այրումից՝ ներառյալ տրանսպորտում օգտագործվող վառելիքը, ինչպես նաև փախուստային արտանետումները՝ կապված բնական գազի փոխադրման, պահեստավորման և բաշխման հետ:

Համաձայն ՀՀ կառավարության 48-Լ որոշման[4] և որոշման մեջ 2023 թվականի 26 հոկտեմբերի N 1827-Լ որոշմամբ կատարված փոփոխությունների[5]՝ ՀՀ-ն նպատակ ունի ավելացնել վերականգնվող էներգետիկայի հզորությունը և մինչև 2040թ. այն հասցնել 2000 ՄՎտ-ի, որից 1500 ՄՎտ-ն արևային, իսկ 500 ՄՎտ-ն՝ հողմային էներգետիկայի հաշվին: Փոքր հիդրոէներգետիկայի հզորությունը նախատեսվել է հասցնել 430 ՄՎտ-ի: Արդյունքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ արտադրված էլեկտրաէներգիայի մասնաբաժինը էլեկտրաէներգիայի համախառն վերջնական սպառման մեջ 2030թ-ին, ներառյալ խոշոր հիդրոէլեկտրակայանները, կհասնի շուրջ 50%-ի, իսկ մինչև 2040 թ-ը՝ շուրջ 60%-ի:

ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 և 2023 թվականների տարեկան հաշվետվությունների[6] վերլուծությունը ցույց է տալիս, որ վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրաէներգիա արտադրող կայանների (մինչ և 30 ՄՎտ) կողմից արտադրվում է արտադրված ընդհանուր էներգիայի 11,82-12,46%-ը / 2022թ. արտադրվել է 8907.9 մլն կՎտժ էլեկտրաէներգիա, որից վերականգնվող՝ 1052.4 մլն կՎտժ-11.82%, 2023թ. արտադրված 8455.2 մլն կՎտժ էլեկտրաէներգիայից վերականգնվողի մասնաբաժինը կազմում է 1088.5 մլն կՎտժ-12,46%/:
2024թ. 1-ին կիսամյակում նկատվում է այդ հարաբերակցության դրական տեղաշարժ,

[2] https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/GV3B-E697-7A3B-477E/2318.1.pdf
[3] https://drive.google.com/file/d/1T74FSFR2Hl8a0gHK8kRxX5H0NbkMri5z/view
[4] hէէքտ://6–go7.3տ/ջo7–ծ6Ըր66տ/Իէ6տ/41448/
[5] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=184420
[6] https://www.psrc.am/contents/fields/electric_energy/el_energy_reports

արտադրված 4422.62 մլն կՎտժ էլեկտրաէներգիայից վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ արտադրող կայանների (մինչ և 30 ՄՎտ) մասնաբաժինը կազմել է 953.70 մլն կՎտժ, այսինքն, ընդհանուր արտադրված էներգիայի 21,56 %-ը:

Եզրակացություն

1. Հաշվի առնելով վերականգնվող էներգետիկայի զարգացումների ներկա տեմպերը և այն, որ կառուցման փուլում գտնվող 40 հատ արդյունաբերական արևային կայանները կունենան 252 315կՎտ ընդհանուր հզորություն և 512,9 միլիոն կՎտ.ժամ էլեկտրաէներգիայի փաստացի միջին տարեկան առաքման ծավալի պոտենցիալ՝ չհաշված «Այգ-1» 200 ՄՎտ հզորությամբ կայանի կառուցման տեսլականը, միանգամայն հավանական է, որ 2030թ. Հանրապետությունը հասնի իր սահմանած թիրախին:

2. Էներգետիկայի ոլորտից ՋԳ արտանետումների կրճատմանը միտված մնացած մարտահրավերները՝ էներգախնայողության, էներգետիկ աղքատության հաղթահարման, համայնքային ինքնավար արևային կայանների ցանցի ընդարձակման, տնային տնտեսության մեջ հեղուկ գազից աստիճանական հրաժարման, ՀԱԷԿ-ի նոր էներգաբլոկի կառուցման, ՀՀ հողմային էներգետիկայի ներուժի գնահատման աշխատանքները շատ հեռու են բավարար լինելուց:

Անտառային ոլորտում ստանձնած հանձնառությունների կատարողականի գնահատում

Ըստ Ջերմոցային գազերի ազգային 1990-2019թ. հաշվետվության[7]՝ «Անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում» սեկտորից ածխածնի երկօքսիդի կուտակման ծավալները նվազել են՝ 1990թ. -49.4%-ից 2017թ. հասնելով -20.7%-ի, ինչ վկայում է անտառների՝ ջերմոցային գազի կլանման ունակության կտրուկ նվազման մասին:
(ՋԳ-ՑԱՋԵՌ) –ով «Անտառային հողեր» ոլորտում (ներառում է անտառային ֆոնդի, հատուկ պահպանվող տարածքների, ինչպես նաև գյուղատնտեսական հողերի անտառածածկ տարածքները) նախատեսվում է ավելացնել անտառածածկ տարածքը, բարելավել անտառվերականգնման և անտառի կայուն կառավարման գործելակերպերը, դրանով իսկ մեծացնել ածխաթթու գազի կլանման կարողությունները: «Առանց միջոցառումների» սցենարով 2050թ. համար անտառածածկ տարածքի թիրախային ցուցանիշը սահմանվել է 350,891.2 հեկտար, «Միջոցառումներ» և «Լրացուցիչ միջոցառումներ» սցենարների շրջանակներում՝ մինչև 450000 հեկտար անտառածածկ տարածքի հնարավորությունը: Ընդհանուր առմամբ, 20 տարվա ընթացքում (2031-2050 թթ.) CO_2 ընդհանուր կլանումը կկազմի 21934 ԳգCO2

[7] https://drive.google.com/file/d/1T74FSFR2Hl8a0gHK8kRxX5H0NbkMri5z/view

համ.:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 2018թ. ՀՀ հողային հաշվեկշռի, անտառածածկ տարածքները կազմել են մոտ 10%-ը[1]: Նույն կոմիտեի տվյալներով[8] 2018-2022թթ. ՀՀ ում արձանագրված ապօրինի հատված ծառերի և անտառածածկ տարածքների հրդեհման, անտառտնկման և անտառվերականգնման տվյալները հետևյալն են.

Թվական	Ապօրինի հատված ծառերի թիվը, հատ	Հրդեհված անտառ ածածկ տարածքի մակերեսը, հա	Անտառտնկում, հա	Անտառվերա կանգնում, հա
2018	12821	239,0	80,5	17,2
2019	16818	1181,8	172,0	126,3
2020	12978	342,4	129,5	0,8
2021	19475	889,6	136,8	3,3
2022	17193	1099,4	174,8	6,1
Գումարային	79285	3752,2	693,6	153,7

Ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականին շուրջ 436 հեկտար տարածքում կատարվել են անտառվերականգնման և անտառպատման աշխատանքներ[9], իր ելույթում նախարարը սակայն չի անդրադարձել նույն թվականին անտառային հրդեհների հետևանքով անտառային տարածների կորստին: Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 5 տարվա ընթացքում հրդեհված անտառատարածքի մակերեսը 2904,9 հա-ով գերազանցում է տնկված և վերականգնված անտառային մակերեսին:

Անտառտնկման ներկա տեմպերով հնարավոր չէ և անիրատեսական է հասնել ԱՍԳ-ով նախանշած՝ 2030 թվականին ՀՀ անտառային տարածքի 12.9% թիրախին, իսկ մինչև 2050թ.՝ 20,0%-ի թիրախին:

ՀՀ–ն չունի 50,0 հազ. հա պահուստային անտառային տարածք: Մինչև հիմա ճշգրտված չէ ՀՀ անտառածածկ տարածքի մակերեսը /ըստ պաշտոնական տվյալների՝ անտառների ծածկույթը կազմում է 11,2%, սակայն փաստացի՝ գնահատվում է 8%-10%/: Անտառածածկի ավելացման կայուն դինամիկա ապահովելու միջոցառումները բավարար չափով չեն զուգակցվում անտառպաշտպանությանն ուղղված՝ անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի, անտառային հրդեհների կանխարգելման, ապօրինի անտառհատումների դեմ պայքարի միջոցառումներին:

8 https://armstat.am/file/article/f_sec_3_2023_4.pdf
9 https://www.ecolur.org/hy/news/forest/15575/

«Արդյունաբերական գործընթացների և արտադրանքի օգտագործում» ոլորտում ստանձնած հանձնառությունների կատարողականի գնահատում

ՀՀ-ում 2019թ., ըստ ՀՀ ջերմոցային գազերի ազգային կադաստրի 1990-2019թթ. հաշվետվության, «Արդյունաբերական պրոցեսներ և արտադրանքի օգտագործում» ոլորտից ՋԳ արտանետումների մասնաբաժինը կազմել է 11.5%:

ՋԳ-ՑԱՋԵՌ–ով ՋԳ աստիճանական կրճատման «Արդյունաբերական գործընթացների և արտադրանքի օգտագործում» ոլորտում ՋԳ-ի արտանետումների թիրախներ են՝ ՋԳ արտանետումները 2030թ. հասցնել 1442 զգ CO_2համարժեք և 2050թ.՝ 1725 զգ CO_2համարժեք:

Ըստ (ՋԳ-ՑԱՋԵՌ)–ի՝ ոլորտում ՋԳ արտանետումների կրճատումը կիրականացվի սարքավորումների և տեխնոլոգիական գործընթացների արդիականացման միջոցով, հիմնականում՝ ցեմենտի արտադրությունում: «Միջոցառումներ» սցենարով 2030-2050թթ. ընթացքում արտանետումների ընդհանուր նվազումը կկազմի 3492 ԳգCO2 համ.: «Լրացուցիչ միջոցառումներ» սցենարով առավել առաջադեմ միջոցառման կիրառումը կհանգեցնի արտանետումների նվազման՝ 9323 ԳգCO2 համ. չափով նույն ժամանակաշրջանի համար:

Ցեմենտի արտադրությունը ՀՀ-ում բացառապես մասնավոր հատվածինն է, հետևապես, այս ոլորտից ակնկալվող արդյունքն անմիջականորեն կախված է սեփականատիրոջ՝ սարքավորումների և տեխնոլոգիական գործընթացների արդիականացման կամքից և պետության կողմից ակնկալվող աջակցությունից:

«Գյուղատնտեսություն» ոլորտում ստանձնած հանձնառությունների կատարողականի գնահատում

«Գյուղատնտեսություն» ոլորտը, ըստ ՀՀ ջերմոցային գազերի ազգային կադաստրի 1990-2019թթ. հաշվետվության՝ ամենամեծ ծավալով ՋԳ արտանետումներ առաջացնող երկրորդ ոլորտն է՝ 18.5% մասնաբաժնով: Ջերմոցային գազերը ներառում են անասունների աղիքային խմորումից արտանետվող մեթանը, գոմաղբի օգտագործումից, կենսազանգվածի այրումից և մշակվող հողերից առաջացող ազոտի ենթօքսիդը, ինչպես նաև միզանյութի օգտագործումից առաջացող CO_2 արտանետումները:

«Գյուղատնտեսություն» ոլորտում ՋԳ արտանետումները նախատեսվում է նվազեցնել գոմաղբի օգտագործման և կենսագազի ստացման, ոռոգման համակարգի արդյունավետության բարձրացման (36 հազար հեկտարի ոռոգման սխեմաներում ջրի մատակարարման արդյունավետության բարելավումը և էլեկտրաէներգիայի սպառման կրճատումը), նոր ցեղերի ներմուծման (տարեկան 3000 խոշոր եղջերավոր կենդանիների ներմուծում) և կերի որակի բարելավման հաշվին:

Գյուղատնտեսության վրա կլիմայի փոփոխության հետևանքները մեղմելու և ոլորտից ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանն ուղղված իրականացված

միջոցառումները բավարար չեն կլիմայի փոփոխության մեղմումն ապահովելու համար: Մասնավորապես՝

- նախատեսված դաշտերում հողակտորների միացման, հողերի խոշորացման ու գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման ՀՀ կառավարության տեսլականը չի կատարվել, կամ կատարման ցուցանիշները շատ փոքր են

- կառուցված Բաղրամյան-Նոյակերտ համակարգի հագեցվածության և այնտեղ կաթիլային համակարգի տեղադրման վերաբերյալ միջոցառումները բավարար չեն

- ջրօգտագործման համակարգերի արդյունավետ աշխատանքի համար անհրաժեշտ ներդրումների համար պահանջվող ֆինանսները (3-4 միլիարդ դրամ) դեռևս չեն հայթայթվել:

Արարատյան դաշտում դրենաժային համակարգերից շուրջ 1,6 միլիարդ խմ ջրի նվազեցման համար նախատեսվող ջրամաբարաշինարարական, պոմպակայանների տեղադրման, ինչպես նաև ջրի շրջանառու համակարգերի ներդրման ծրագրերը չեն կատարվել:

Ջրային կոմիտեի պետական սեփականության ներքո գտնվող 69 ջրամբարներում շուրջ 1,2 միլիարդ խմ ջուր ամբարելու պոտենցիալի և կլիմայի գլոբալ փոփոխության հետևանքով գործնականում այդ ջրամբարներում 950 միլիոն խմ ջուր ամբարելու մասին տեսլականը չի կատարվել նախատեսվող ջրամբարների շինարարության ձգձգումների հետևանքով:

Ախուրյան-Արաքս թևի ջրամբարների խնդիրները դժվար լուծելի են, քանի որ 2019-2020թթ. Թուրքիան իր ստեղծած համակարգի շնորհիվ կարողանում էր ամբարել Հանրապետությանը հասնող ջուրը, և դրա հետևանքով Թալինի և Արմավիրի վերին շրջանների տարածաշրջաններն արդեն իսկ կանգնած են ջրի խնդրի առաջ /Թուրքիան Ջրի միջազգային համաձայնագիրը չի ստորագրել, դա կանխարգելելու համար միջազգային լծակներն այս հարցում չի կարող կիրառվել/:

«Թափոններ» (կոշտ թափոնների կառավարում, կեղտաջրեր) ոլորտում ստանձնած հանձնառությունների կատարողականի գնահատում

Ոլորտի արտանետումները ներառում են մեթանի, ածխաթթու գազի և ազոտի ենթօքսիդի արտանետումները կոշտ կենցաղային թափոնների քայքայման, բաց այրման, հրկիզման, ինչպես նաև կեղտաջրերի մշակման և արտազատման ընթացքում:

Ըստ Ջերմոցային գազերի ազգային 1990-2019թթ. հաշվետվության՝ «Թափոններ» ոլորտի արտանետումները կազմել են 2018թ.՝ 628.65 Գգ CO_2 համ., 2019թ.՝ 628.70 Գգ CO_2 համ., որը կազմում է երկրի ընդհանուր արտանետումների 5.6%-ը և 6.0%-ը, համապատասխանաբար:

ՋԳ-ՑԱՋԵՌ–ով «Թափոններ» ոլորտի համար նախատեսված միջոցառումները ներառում են աղբավայրերից գազերի կորզման և օգտահանման կայանների ստեղծման, օրգանական թափոնների նվազեցման և տարանջատ հավաքման համակարգի ներդրման, բաց այրման բացառման, ինչպես նաև վտանգավոր թափոնների գործածության ոլորտում՝ մասնավորապես հրկիզման, հասանելի լավագույն տեխնոլոգիաների ներդրման ճանապարհով աստիճանաբար կրճատել ջերմոցային գազեր և 2050 թվականին հասնել 484 գգ CO_2 համ. թիրախին։

Եզրակացություն

Այդ թիրախին հասնելու հանձնառության կատարման հավանականությունը շատ փոքր է, քանի որ.

1. ՀՀ-ում թույլ է կոշտ կենցաղային թափոնների հավաքման և աղբավայրերում տեղադրելու համակարգը, չկա ոչ մի լիցենզավորված աղբավայր, աղբահանության աշխատանքները բնակավայրերի մի մասում չի իրականացվում

2. Երևան քաղաքի Նուբարաշենի աղբավայրի փակման և նոր աղբավայրի հիմնման ծրագիրը չեղարկվել է, քննարկումներ են ընթանում Համաշխարհային բանկի հետ նոր ծրագրի վերաբերյալ։ Մինչ այդ շարունակվելու է աղբի կուտակումը հին աղբավայրում, դրան հետևող բաց այրման շարունակական դեպքերով

3. շարունակվում են Երևանի մնացած աղբավայրերի, ինչպես նաև «մարզային» և «համայնքային» աղբավայրերի ինքնահրդեհման, կամ մարդկային գործոնով պայմանավորված հրդեհման դեպքերը

4. աղբավայրերը և աղբանոցները չեն համապատասխանում միջազգային կամ որևէ քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարահիգիենիկ չափանիշների և շահագործվում են չկանոնակարգված, և խնդիր է Հանրապետության բնակավայրերում տարեկան առաջացող 688 937 տոննա աղբի տեղակայումը։

5. 2024թ. մայիսի տվյալներով չնայած նրան, որ «Կոտայք-Գեղարքունիք» աղբավայրերի փոխաբեռնման կայանները պատրաստ են և Հրազդանի աղբավայրն ամբողջությամբ պատրաստ է շահագործման, բայց մեքենաների պարկի ոչամբողջական լինելու պատճառով դեռևս չի շահագործվում: Չի իրականացվում նաև Լոռու և Տավուշի մարզերի համար նախատեսված աղբավայրի շինարարությունը։

Միայն աղբավայրերի հիմնումը խնդիրը չի լուծի, անհրաժեշտ է, որ դա զուգակցվի թափոնների կառավարման՝ հավաքման, տեսակավորման, օգտահանման, չեզոքացման ապահովվման ամբողջական շղթայով

6. դեռևս սաղմնային վիճակում են կենցաղային աղբից թղթի, պլաստիկի, ապակու, վերջին շրջանում Երևանում նաև ալյումինի թոփոնների տեսակավորման համար անհրաժեշտ թափոնամանների տեղադրման աշխատանքները։ Կարիքավոր

բնակչության կողմից տարբերայնորեն տեսակավորվում են բնակավայրերի աղբամաններում կամ աղբավայրերում տեղադրված կոշտ կենցաղային թափոնները

7. չի ձևավորվել կանոնակարգված և ծավալուն օրգանական թափոնների նվազեցման և տարանջատ հավաքման համակարգը

8. չկան աղբի վերամշակման կամ հրկիզման գործարաններ, իսկ թափոնների առանձին տեսակները վերամշակվում են մասնավոր ցեխերում

9. դեռևս չեն ստեղծվել աղբավայրերից գազերի կորզման և օգտահանման կայանքներ / Չհաշված Նուբարաշենի աղբավայրի մի փոքր հատվածից անջատվող մեթանի՝ բաց այրման կետի/

10. գյուղական բնակչության առաջացրած կենցաղային աղբը հիմնականում կուտակվում է հարակից ձորակներում և պարբերաբար այրվում, կամ տեղափոխվում է բնակավարի «աղբավայր», որտեղ նույնպես առկա է բաց այրում

11. ներկայում Հայաստանի Հանրապետության կոյուղու համակարգերի սպասարկման տարածքը սահմանափակ է: Կեղտաջրերի մաքրման կայանները սակավաթիվ են, որոնք իրականացնում են միայն մեխանիկական մաքրում: Հանրապետությունում բացակայում է կենցաղային և արդյունաբերական կեղտաջրերի կենտրոնացված կենսաբանական մշակումը, տիղմի հեռացումը և մեթանի կորզումը

1. ՀՀ թափոնների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված քաղաքականության միջոցառումների նպատակները չեն իրագործվել, հետևաբար, չի պահպանվել նպատակային արդյունավետության սկզբունքը:

2. Թափոնների ոլորտից ջերմոցային գազերի կրճատման ծավալների արդյունքում կլիմայի փոփոխությանն կանխարգելմանն ուղղված ՓՀ-ով ստանձնած ՀՀ հանձնառությունների կատարման համար անհրաժեշտ է մեծ քաղաքական կամք, ինչպես նաև երաշխավորված միջազգային համաֆինանսավորում:

ԿԼԻՄԱՅԻ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

ՀԱԾ գործընթացը նախաձեռնվել է ՄԱԿ-ի ԿՓՇԿ շրջանակներում: Գործընթացի հիմքը դրվել է 2010թ.՝ ՄԱԿ-ի ԿՓՇԿ Կողմերի 16-րդ համաժողովում: Թիրախները հստակեցվել են 2015թ. ՓՀ շրջանակներում, որը Հայաստանը վավերացրել է 2017թ.:

ՀԱԾ գործընթացի հիմնական նպատակն է նպաստել Հայաստանում կլիմայի ռիսկերի նվազեցմանը և կառավարմանը՝ դիմակայելով կլիմայի փոփոխության ազդեցությանը,

օգտվելով ի հայտ եկող հնարավորություններից, խուսափելով կորուստներից և վնասներից ու կառուցելով այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան բնական, մարդկային, արտադրական և ենթակառուցվածքային համակարգերում հարմարվողականություն ապահովել:

ՀԱԾ-ով ոլորտային ռազմավարական ծրագրերը պետք է ապահովեն հետևյալ 8 սկզբունքները.

- **Կլիմայի նկատմամբ խոցելիությունը և սոցիալական հավասարությունը փոխկապակցված են**
- **Հարմարվողականությունը պետք է խթանի գենդերային մոտեցումները**
- **Բազմաբնույթ վտանգներին արձագանքելու մոտեցումը**
- **Ռիսկերի նվազեցման և զարգացման հավասարակշռում**
- **Հարմարվողականության էկոհամակարգային մոտեցում**
- **Ներգրավվածություն և ներառականություն**
- **Թափանցիկություն և գիտելիքների փոխանցում**
- **ԿՓ-ների հետ կապված ֆինանսական որոշումների կայացումն ու կառավարում**

ՀԱԾ-ը բաղկացած է իրագործման ենթակա միջոցառումների երկու փաթեթից, որոնցից մեկը ներառում է հարմարվողականության միջոցառումների շարք՝ նախատեսված վեց առաջնահերթ ոլորտների և երկու պիլոտային մարզերի համար:
ՀԱԾ-ը պարբերաբար վերանայվելու և թարմացվելու է 5-ամյա փուլերով: Ազգային հաղորդագրության վերանայումներին զուգահեռ ներկայացվելու է ԿՓՇԿ-ով և ՓՀ-ով նախատեսված հարմարվողականության վերաբերյալ 20 հաղորդագրություն, համապատասխան չափման, հաշվետվողականության և հավաստագրման գործընթացներին զուգընթաց ապահովվելու է անհրաժեշտ տեղեկատվություն կլիմայական քաղաքականության և միջոցառումների իրականացման և ձեռքբերումների վերաբերյալ:

ՀՀ ԱՍԳ-ն ձևակերպվել է այն հաշվարկով, որ այն հնարավորություն ստեղծի պահպանել.

1. գլոբալ միջին ջերմաստիճանի աճը մինչարդյունաբերական մակարդակից բարձր 2°C-ից զգալիորեն ցածր մակարդակում, և ջանքեր գործադրել ջերմաստիճանի աճը մինչարդյունաբերական մակարդակից բարձր 1.5°C-ից չգերազանցելու ուղղությամբ
2. հետամուտ լինել Կոնվենցիայի նպատակի իրագործմանը՝ միաժամանակ առաջնորդվելով նրա սկզբունքներով, ներառյալ արդարության և ընդհանուր, բայց տարբերակված պարտականությունների և համապատասխան հնարավորությունների սկզբունքով՝ հաշվի առնելով ազգային առանձնահատուկ պայմանները
3. մեղմման և հարմարվողականության գործողություններում կիրառել էկոհամակարգային մոտեցում, նախապատվությունը տալով հավասարակշռված և համակցված գործողություններին:

Հայաստանում ազգային մակարդակով ՀԱԾ-ի գործընթացի ներդրում և զարգացում բաղադրիչով նախատեսվում է 17 միջոցառում, որոնցից 6-ը կոնկրետ ոլորտների՝ ջրային, գյուղատնտեսության, էներգետիկայի, առողջապահության. զբոսաշրջության անտառների կառավարման ոլորտներում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը հաստատելու վերաբերյալ կառավարության որոշումներ ընդունման ճանապարհով:
Ոլորտների ընդհանուր վիճակի նկարագրությունները և հարմարվողականության քաղաքանությունների իրացման պատկերը հետևյալն են՝

1. Ջրային ռեսուրսների ոլորտ

Հայաստանի միջին բազմամյա վերականգնվող ջրային ռեսուրսները կազմում են մոտ 7 մլրդ. խմ: Ստորերկրյա ջրերի պաշարները մոտ 4 մլրդ. խմ են: 2018թ. համար վերականգնվող ջրային ռեսուրսները կազմել են 6 մլրդ. 571 մլն. խմ, ջրառը՝ 2 մլրդ 715 մլն. խմ (1 մլրդ. 523 մլն. խմ՝ մակերևութային աղբյուրներից և ևս 1մլրդ 192 մլն. խմ ստորերկրյա աղբյուրներից), ջրային ռեսուրսների շահագործման ցուցանիշը կազմում է 41.3%[10]:

Հայաստանում մեկ շնչին բաժին ընկնող ջրի ծավալը միջին հաշվով կազմում է 465 խմ, ինչը համարվում է ցածր ցուցանիշ հանրապետության կիսաչոր կլիմայական պայմանների համար: Խմելու ջրի շուրջ 96%-ը և ընդհանուր ջրառի ավելի քան 40%-ը կազմում են ստորերկրյա ջրերը: Ոռոգման ոլորտը շարունակում է մնալ Հայաստանի ջրային պաշարների խոշոր սպառողը:

Ըստ Կլիմայի փոփոխության 4-րդ ազգային հաղորդագրության[11] և ՇՄ նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի[12] ՀՀ–ում 2040թ. կանխատեսվում է գետային հոսքի նվազում մոտ 14%-ով, 2070թ. կանխատեսվում է գետային հոսքի խոցելիություն մոտ 28%-ով, իսկ 2100թ.՝ 39%-ով: Եթե գետային հոսքի բազիսայինը մոտ 7,1 միլիարդ խմ է, ապա, ըստ գնահատականների, 2100թ. կանխատեսվում է, որ գետային հոսքը կկազմի 4,3 մլրդ խմ:

2100թ. կանխատեսվում է Սևանա լիճ մուտք գործող գետային հոսքի նվազում մոտ 30-35%-ով, ինչը բացասական ազդեցություն կունենա լճի կենսական ռեսուրսների վրա: 2040թ. կանխատեսվում է գոլորշիացման աճ լճի մակերևույթից մոտ 10%-ով, 2070թ.՝ 20-25%-ով, 2100թ.՝ 35%-ով: Կանխատեսվում է, որ 2100թ. կդիտարկվի ջրամբարների լցվածության 30-35% նվազում: Կլիմայի փոփոխության հանդեպ ջրային ռեսուրսների խոցելիության և հարմարվողականության ուղղությամբ իրավական ու ինստիտուցիոնալ միջոցառումներն սկսել են իրականացվել հատկապես վերջին տարիների ընթացքում:

Այդ նպատակով ընդունվել է գետերի բնապահպանական թողքերի գնահատման նոր մեթոդաբանությունը, ջրային ռեսուրսների պետական կադաստրի վարման նոր

[10] https://armstat.am/file/doc/99525618.pdf
[11] http://env.am/storage/files/fnc-arm.pdf
[12] https://www.ecolur.org/en/news/climate-change/13081/

կարգը, ՓՀԷԿ-երի կառուցման և շահագործման համար ՇՄԱԳ-ի չափորոշիչները, հիդրոէներգետիկայի զարգացման հայեցակարգը, մշակվել են ջրավազանային կառավարման պլաններ՝ հաշվի առնելով կլիմայի փոփոխության մարտահրավերները: Հնարավորինս բարելավվում և արդիականացվում են ոռոգման համակարգերը՝ կրճատելով հոսակորուստները և նվազեցնելով էլեկտրաէներգիայի ծախսը: Ավարտին են մոտենում Վեդու ջրամբարի /ընդհանուր ծավալը՝ 29,4 մլն խմ, կապահովի 6 հազ. հա հողատարածքի ոռոգում/ շինարարությունը: 2023 թ. մայիսին սկսվել է Կապսի ջրամբարի /ծավալը 1-ին փուլում 25, 2-րդ փուլով՝ 60,0 մլն.խմ, ապահովելու է 17,0 հազ. հա հողատարածքի ոռոգում/ շինարարական աշխատանքները, ինչպես նաև Մաստարայի ջրամբարի /ծավալը 10,2 մլն. խմ, կապահովի 4, 384 հազ. հա հողատարածքներ/ կառուցման տեխնիկատնտեսական ուսումնասիրության աշխատանքները:

1. Ընդունվել է «Ջրային ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը և 2022-2026 թթ. միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 3-ի N 1692 - Լ որոշումը[13]: Ըստ որոշման՝ ծրագիրն ընդգրկում է 2022-2026թթ. ժամանակահատվածը և կենտրոնանում է ԿՓ հարմարվողականության հատուկ միջոցառումների վրա՝ հաշվի առնելով ՀԱԾ-ի 8 սկզբունքները: Ծրագրի 26 առաջնահերթ միջոցառումների իրականացման նախնական ծախսերի նախահաշիվը գնահատվել է մինչև 51,3 մլրդ ՀՀ դրամ, որից 49,8 մլրդ դրամը կապիտալ ծրագրեր են՝ ջրամբարները՝ 22,6 մլրդ դրամ, ջրանցքները՝ 24,8 մլրդ դրամ, 1,4 մլրդ դրամը՝ խոցելի բնակավայրերի սանիտարական մաքրման և 956 մլն դրամը՝ հիդրոլոգիական դիտակետերի վերազինման համար:

Ծրագիրն ունի մի քանի թերություններ.

- Որոշման մեջ ամրագրված չեն այլ ոլորտների՝ էներգետիկայի, քաղաքաշինության, գյուղատնտեսության քաղաքականություններում ջրային ռեսուրսների օգտագործման և կառավարման ԿՓ հարմարվողականության դրույթներ: Բացառություն է ՀՀ Ջրային կոմիտե, որի դեպքում ամրագրված է տեղեկատվության փոխանակման դրույթ:
- Որոշման մեջ բացակայում են դրույթներ և միջոցառումներ՝ կլիմայի փոփոխությամբ պայմանավորված ջրային ռեսուրսների հիդրոլոգիական և քիմիական կազմի որակի կանխատեսումների վերաբերյալ, ինչը նախատեսվել էր «Կառավարության 2019-2023 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշման հավելված 1-ում:
- Բացակայում են ՀԱԾ ջրային ոլորտում կլիմայի նկատմամբ խոցելիության և սոցիալական հավասարության փոխկապակցվածության սկզբունքն ապահովող դրույթները և մեխանիզմները:
- Չեն պահպանվել ներգրավվածությունն և ներառականությունն ապահովող սկզբունքները: Խիստ սահմանափակ է քաղաքացիական հասարակական կազմակերպությունների դերը: Այդ դերը սահմանափակված է միայն ԿՓ տեղական

13https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/GV1E-287B-6173-DAB9/1692.1.pdf

ազդեցությունների դիտորդման և հարմարվողականության միջոցառումների իրականացման գործում ներգրավվածությամբ: ՀԾ ռազմավարական նպատակներին ուղղված ջրային ոլորտի հարմարվողականության միջոցառումների իրականացման արդյունավետության գնահատման ցուցանիշներում բացակայում է դրանց կարծիքների բաղադրիչը:

- Ծրագրի իրականացումն ապահովող 26 միջոցառումների կատարման ժամկետներն անիրատեսական են, քանի որ ծրագիրը հաստատվել է 2022թ. նոյեմբերերին, և 3 տարում այդ միրոցառումների կատարման հավանականությունը շատ ցածր է՝ հաշվի առնելով նաև ռիսկերը:
- Մասնավոր հատվածի կողմից հարմարվողականության ծրագրի իրականացմանը մասնակցությունը դիտարկվում է բացառապես նրա կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շահերի տեսանկունից և չի ամրագրում մասնակցության իմպերատիվ դրույթներ:

2. ՀՀ ջրային օրենսգրքում կատարվել են փոփոխություններ[14], որի նպատակն էր կատարել ջրային ռեսուրսների վրա կլիմայի ազդեցության մեղղման ու հարմարվողականությանն ուղղված կարգավորումներ: Մեր գնահատմամբ օրենքում առկա են հետևյալ բացերը.

- Կատարված փոփոխությունները կրում են զուտ ձևական բնույթ, քանի որ կլիմայական հասկացությունների ներմուծումը մայր օրենք չի ապահովում գործնականում դրանց կիրառելիությունը:
- Բացակայում են ջրային ոլորտում կլիմայական բացասական ազդեցությունների մեղմման, կլիմայի փոփոխման տեսանկյունից ջրօգտագործման հայտերի գնահատման մեխանիզմները:
  - Ջրային ոլորտի կառավարման և պահպանության մարմնի լիազորությունները սահմանող 10-րդ հոդվածում չեն ամրագրվել կլիմայի փոփոխությամբ կամ անտրոպոգեն ազդեցությամբ պայմանավորված ջրային պաշարի նվազման չափորոշիչների, նախատեսվող ջրօգտագործման ազդեցության՝ ջրային ռեսուրսների խոցելիության մեծացման վրա կլիմայի ներկա և կանխատեսվող փոփոխությունների հետևանքով թողնվող չափանիշները սահմանելու լիազորություններ/ մեթոդաբանություն/:
  - Օրենքում բացակայում են կլիմայի փոփոխության ներքո ջրային ռեսուրսների կառավարման հրատապության հիմնավորումները:
    - Բացակայում են ջրի կրկնակի, կամ վերօգտագործման արդյունավետ իրականացման համար իրավական հիմքեր պարունակող դրույթներ և դրա խթանմանը նպաստող դրույթները:
    - Պարտադիր հանրային ծանուցման ենթակա փաստաթղթերի ցանկում բացակայում է ջրային ռեսուրսների խոցելիության նվազեցմանն ու հարմարվողականության մասին տեղեկատվության ներառման դրույթը:

Եզրակացություն

14 https://www.arlis.am/documentView.aspx?docid=166206

Ջրային ոլորտում կատարված ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումները բավարար չեն կլիմայի փոփախության կարճաժամկետ և երկարաժամկետ դիմակայման համար:
Փոքր է ոլորտում կատարված փոփոխությունների ազդեցությունը համայնքային մակարդակում: Օրենսդրական մակարդակով սահմանված չեն ջրային ոլորտում լիազորություններ ունեցող պետական գերատեսչությունների միջև փոխգործակցության դրույթները և հարակից ոլորտային քաղաքականություններում ջրային ոլորտի ինտեգրման մեխանիզմները: Թույլ են ջրային ռեսուրսի կրկնակի, կամ վերօգտագործման արդյունավետ իրականացման ապահովման իրավական հիմքերը, բացակայում են դրա խթանումը խրախուսող իրավական հիմքերը: Գենդերային մոտեցումների պահպանման սկզբունքը սահմանափակվում է միայն կլիմայի փոփոխության վերաբերյալ կանանց իրազեկման գործիքակազմի կիրառմաբ:

Սահմանված չեն կլիմայի փոփոխությամբ կամ անտրոպոգեն ազդեցությամբ պայմանավորված ջրային պաշարի նվազման չափորոշիչները: Չկան ջրօգտագործման հայտի գնահատման չափորոշիչներ կլիմայի փոփոխության տեսանկյունից: Բավարար ծավալով չեն կատարվել ջրային ոլորտի հարմարվողականության միջոցառումների իրականացման արդյունավետության գնահատման ցուցանիշների հիմք հանդիսացող տեխնիկական միջոցառումները:

Ծրագրի իրականացուումն ապահովող մինչև 51,3 մլրդ ՀՀ դրամ ֆինանսական աղբյուրների հայթայթումն, ինչպես նաև միջոցառումների կատարման ժամանակացույցն անիրատեսական են:

2. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՈԼՈՐՏ

ՀՀ անտառները և անտառային հողերը 1993 թվականի անտառների պետական վերջին հաշվառման արդյունքներով կազմում է երկրի տարածքի շուրջ 11.2 %-ը՝ 460 հազ. հա, որից 334.1 հազ. հա-ն՝ անտառածածկ (այս տվյալները չեն ընդգրկում հետագա տարիներին անտառային տարածքներում տեղի ունեցած փոփոխությունները): Վերջին մի քանի տարում տարբեր, ոչ պաշտոնական կառույցների կողմից կատարվել են անտառների հաշվառում, համաձայն որոնց այն պակաս է պաշտոնական տվյալներից:

Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի ՓՀ-ի ներքո ՀՀ-ի 2021-2030թթ. ԱՍԳ-ով (Կառավարության 22 ապրիլի 2021 թվականի N 610-Լ որոշում) նախատեսվում է Հանրապետության անտառածածկը հասցնել 12.9%-ի, որն ամրագրված է նաև Բոննի մարտահրավերների շրջանակում երկրի կողմից ստանձնած պարտավորությամբ, այն է՝ մինչև 2030 թվականն անտառածածկը ավելացնել 50,000 հա-ով:

Անտառների կայուն կառավարման ոլորտում պետական կառավարման լիազորված մարմին է ՀՀ ՇՄՆ-ն, ի դեմս նախարարության Անտառային քաղաքականության վարչության և Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 17

«Անտառտնտեսություն» մասնաճյուղերի:

Անտառների և հատուկ պահպանության տարածքների պետական հսկողության համար նախարարության կազմում օրենքով ստեղծվել է նաև Էկոպարեկային ծառայություն[15]:

ԿՓ հետևանքով անտառները ենթարկվելու են մեծ ճնշման՝ ջերմաստիճանի բարձրացման, տեղումների նվազեցման և հեղեղումներից ու փոթորիկներից վնասի ավելացման արդյունքում: Փոփոխվելու են ծառերի աճի համար բարենպաստ աշխարհագրական գոյություն ունեցող սահմանները, անտառային տարածքները կորցնելու են իրենց կենսունակությունը: Միջին լեռնային գոտու խոնավ անտառներում, ըստ կանխատեսումների, տեղի կունենան որոշ քսերոֆիտացման գործընթացներ, որի արդյունքում տեղի կունենա տիպիկ տափաստանային, նոսրանտառներին և շիբլյակին բնորոշ տեսակների ներթափանցում: Ժամանակի ընթացքում մերձալպյան գոտու անտառները կփոխարինվեն խոնավ անտառներով, տեղի կունենա անտառային բուսականության վերին սահմանի բարձրացում:

ՀՀ կառավարության՝ 2021թ. մայիսի 13-ի N 749-Լ որոշման հավելվածի 9-րդ գլխով հաստատված միջոցառումների համաձայն՝ մինչև 2023թ. 4-րդ եռամսյակ պետք էր մշակել և վարչապետի աշխատակազմ ներկայացնել «Անտառների կառավարման ոլորտում կլիմայական ռիսկերի կառավարման և կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագիծը մշակվել է, սակայն ՇՄ նախարարությունը, հաշվի առնելով փոխվարչապետի 2023 թվականի սեպտեմբերի 8-ի N 02.1/03.8/31094 և 2022 թվականի դեկտեմբերի 26-ի ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի նիստի N ԿԱ/382 արձանագրության 1-ին կետի 1-ին ենթակետի հանձնարարականները, գրությամբ դիմել է ՀՀ կառավարության աշխատակազմին, առաջարկելով հարմարվողականության ծրագիրը, մյուս ոլորտների հարմարվողականության օրինակով ներառել «Շրջակա միջավայրի ռազմավարության համապարփակ փաստաթղթի մշակման շրջանակներում, որի վերաբերյալ ստացել է համաձայնություն: Ա

Անտառային ոլորտի կայունության բարձրացման, շրջակա միջավայրի պահպանության, սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանն ուղղված համալիր գործողությունների սահմանման, ինչպես նաև տարբեր ոլորտային ռազմավարությունների ու գործողությունների անտառների վրա ազդեցության գնահատում և հնարավոր բացասական հետևանքների մեղմման նպատակով 2023 թ-ին ՇՄՆ-ի կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել նաև անտառային քաղաքականության ռազմավարության նախագիծը[16]: Նախագծով ԿՓ ազդեցության հետևանքով անտառների հարմարվողականության և մեղմման ուղղությունը դիտարկվում է որպես անտառային ռազմավարության ուղղություններից մեկը:

[15] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=186692
[16] https://www.e-draft.am/projects/5673/about

Նախագծով կլիմայական ռիսկերի կառավարումը, անտառների հարմարվողականության բարձրացումը, անտառային ոլորտից ջերմոցային գազերի արտանետումների կրճատումը և ածխածնի կլանման (պահեստավորման) կարողությունների ավելացումը սահմանվում են որպես անտառային քաղաքականության երկարաժամկետ տեսլականի բաղադրիչ: Նախագծում հատուկ գլուխ է նախատեսված նաև անտառների վրա կլիմայի փոխոխության ազդեցությանը, անտառների հարմարվողականությանը և մեղմմանը: ԿՓ-ի հարմարվողականության միջոցառումների սոցիալական երաշխիքներ են դիտարկվում անտառների և ԲՀՊՏ-ների պահպանության համակարգում ներգրավված մասնագետների սոցիալական երաշխիքները, իսկ անտառամերձ համայնքների բնակչության սոցիալական վիճակի մեղմման գործիքակազմ է դիտարկվում մատչելի, այլընտրանքային էներգետիկ ռեսուրսներով ապահովումը: Որոշումը դեռևս չի ընդունվել:

Անտառային ոլորտի հարմարվողականության գործողությունները հիմնականում չեն կատարվել:

3. ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏ

ՀՀ կառավարության՝ 2021թ. մայիսի 13-ի N 749-Լ որոշման հավելվածի գլուխ 9-ով հաստատված միջոցառումների համաձայն՝ մինչև 2023թ. 4-րդ եռամսյակ պետք էր մշակել և վարչապետի աշխատակազմ ներկայացնել «Էներգետիկայի ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծը: Նախագիծն անցել է քննարկումների փուլերը, և ներկայում, համաձայն ՀՀ վարչապետի աշխատակազմի առաջարկի, ոլորտի կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը լրամշակվում է՝ այն էներգետիկայի բնագավառի ռազմավարությունում ներառելու նպատակով:

4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Ըստ Կլիմայի փոփոխության 4-րդ ազգային հաղորդագրության[17] և Համաշխարհային բանկի՝[18] կանխատեսվում է, որ առաջիկա 100 տարիների ընթացքում Հայաստանում կանխատեսվող կլիմայի փոփոխության արդյունքում գյուղատնտեսության ոլորտում ակնկալվում են հետևյալ փոփոխությունները՝

- հողի խոնավության նվազում՝ 10-30%- ով
- գյուղատնտեսական տարբեր մշակաբույսերի խոնավապահովվածության նվազում՝ 7-13%-ով
- ոռոգման ջրի պակաս
- հողի ջրային դեֆիցիտի ավելացում՝ 25-30%-ով
- ոռոգվող հողատարածքների արտադրողականության կրճատում՝ մոտ 24%- ով

[17] http://env.am/storage/files/fnc-arm.pdf
[18] http://documents.worldbank.org/curated/en/2600514 68221982009/pdf/733320WP0ARMEN00Armenia0Jun20120Arm.pdf

- հողերի և բնական արոտավայրերի դեգրադացիա
- արոտավայրերի ընդհանուր մակերեսի և բերքատվության կրճատում՝ 4-10%-ով մինչև 2030թ.
- խոտհարքերի բերքատվության նվազում՝ 7-10%-ով
- կերարտադրության ծավալների կրճատում
- մշակաբույսերի բերքատվության նվազում՝ 8-14%-ով մինչև 2030թ:

Կլիմայի փոփոխության հետևանքն անասնաբուծության ոլորտի վրա մասնավորապես արտահայտվում է բնական կերհանդակների և արոտավայրերի վրա ունեցած բացասական ազդեցությամբ:

Գյուղատնտեսության ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումները ներառվել են Կառավարության 20.07.2023թ. «ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N1886-Լ որոշման մեջ լրացումներ կատարելու և ռազմավարության կատարումն ապահովող 2023-2026թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1222-Լ որոշման մեջ[19]:

Որոշման մեջ որպես սկզբունք ներմուծվել է կլիմայի փոփոխությանը հարմարվողականություն, դիմադրողականություն և շրջակա միջավայրի կայունություն բաղադրիչը, որը գյուղատնտեսության ռազմավարությունում նախանշում է ոլորտում կլիմայի փոփոխությունների վերաբերյալ իրազեկման, հարմարվողականության, մեղմացման, ռեսուրսների կայուն օգտագործման գործառույթների իրականացումը: Որպես ռիսկերի մեղմման գործիք է դիտարկվում փոքր ագրարային տնտեսությունների ապահովագրության համակարգի գործիքակազմի ներդրումը: Ընդգծվում է Կառավարության՝ հատկապես բարձր ռիսկային խմբում գտնվող գյուղացիական տնտեսություններին և բնակչությանը պաշտպանելու նպատակով գյուղատնտեսական ոլորտի երկարաժամկետ մրցունակության բարելավման քաղաքականության իրագործումը: ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը հանձնառում է մշակել կլիմայի փոփոխություններին հարմարվողականության և դիմադրողականության բարձրացման առավել համակարգային ծրագրերի մշակում, կլիմայի փոփոխության վերաբերյալ տվյալների և ռեսուրսների պլանավորման և որոշումների կայացման գործընթացում կանխատեսումների ինտեգրում / առանձին մշակաբույսերի և արժեշղթաների մասով աշխարհագրական առաջնահերթությունների սահմանում, ընդլայնման ծրագրերում կլիմայի «խելացի» գործելակերպերի ինտեգրում և կլիմայի փոփոխություններին հարմարվողականության և դիմադրողականության բարձրացման հատուկ ներդրվող միջոցների վերհանում ու խթանում/: Ռիսկերի մեղմման առումով նշվում է հին հակակարկտային կայանների փոխարինում ժամանակակից բարձրորակ կարկտապաշտպան ցանցային համակարգերով, դրա համար անհրաժեշտ ներդրումների և աջակցության ավելացմամբ: Պարենային անվտանգության ապահովման ենթատեստում կարևորված են գյուղատնտեսական նշանակության հողերի քարտեզագրման գործընթացի իրականացումը, կլիմայի փոփոխությունների նկատմամբ կայուն նոր սորտերի ուսումնասիրությունը և ներդրումը, կլիմայի

[19] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=180654

փոփոխության և բնական աղետների դեմ պայքարի միջոցների, ինչպես նաև կենսաբազմազանության պահպանության վերաբերյալ ոլորտում զբաղված մասնագետներ գյուղացիության շրջանում իրազեկման մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների կազմակերպումը։

Ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումները տարաբաշխված են առաջնահերթություններում՝4 միջոցառում։

1. 2024-2026 թթ., ելնելով փոփոխվող բնակլիմայական պայմաններից, գնահատել մշակաբույսերի արդյունավետ մշակության հնարավորությունները, առաջարկվող մշակաբույսերի արդյունավետ մշակության վերաբերյալ մշակել ուղեցույցներ։
2. 2023-2026թթ. առավել վտանգավոր հիվանդությունների և վնասատուների բռնկումների վերաբերյալ արագ արձագանքման համակարգի ներդրում / ԿՓ պայմանավորված ռիսկերի կանխարգելման և կառավարման համակարգի մշակում և ներդնում, ոլորտի մասնագետների կարողությունների բարելավում, վտանգավոր հիվանդությունների և վնասատուների բռնկումների դեպքում դիմակայության բարձրացում/. կլիմայի փոփոխության պայմաններում հիվանդությունների և վնասատուների ներթափանցման և տարածման դեմ կանխարգելիչ միջոցառումների իրականացում,
3. Մինչև 2023-2026թթ. Կլիմայի փոփոխության պայմաններում հիվանդությունների և վնասատուների ներթափանցման և տարածման դեմ կանխարգելիչ միջոցառումների իրականացում /ՀՀ սահմանային կետերում իրականացվող վերահսկողության որակի բարելավում/։
4. 2023-2026թթ. ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակիցների և գյուղացիական տնտեսությունների կարողությունների հզորացում գյուղատնտեսության ոլորտում առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման և կլիմայի փոփոխության համատեքստում։ Նախատեսվում է մինչև 2026 թվականը 260 քաղաքացու համար իրականացնել իրազեկվածության մակարդակի բարձրացում՝ ԿՓ, դրա բացասական ազդեցության, ինչպես նաև բացասական ազդեցությունը մեղմող կամ կանխարգելող միջոցառումների վերաբերյալ։

Առկա բացերը

- Որոշմամբ ԿՓ հարմարվողականությանը և դիմակայությանն ուղղված միջոցառումները բավարար չեն գյուղատնտեսության ոլորտում ծագող մարտահրավերներին դիմակայելու համար։
- Ռազմավարությունը չի ներառում ոլորտային քաղաքականությունում կլիմայի հարցերով դիտարկումների ուղղորդման դրույթ՝/ CEPA –ի հոդված 52-ի (e) կետի պահանջ /։
- Որոշումը չի ամրագրում տեղական մակարդակներում՝ համայնքներ, ֆերմերային տնտեսություններ, ԿՓ հարմարվողականությանը միտված միջոցառումների և ծրագրերի ներկայացման պարագայում դրանց իրագործման համար լիազոր մարմնի կողմից օժանդակության, խորհրդատվության ցուցաբերման վերաբերյալ դրույթներ։

Եզրակացություն

- Գյուղատնտեսության վրա կլիմայի փոփոխության հետևանքները մեղմելուն և հարմարվողականությանն ուղղված միջոցառումները բավարար չեն կլիմայի փոփոխության հարմարվողականությունն ապահովելու համար: Մասնավորապես՝
- Նախատեսված՝ դաշտերում հողակտորների միացման, հողերի խոշորացման ու գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման ՀՀ կառավարության տեսլականը չի կատարվել, կամ ոլորտում համարյա ոչինչ չի արվել:
- Կառուցված Բաղրամյան-Նոյակերտ համակարգի հագեցվածության և այնտեղ կաթիլային համակարգի տեղադրման վերաբերյալ միջոցառումները բավարար չեն:
- Ջրօգտագործման համակարգերի արդյունավետ աշխատանքի համար անհրաժեշտ ներդրումների համար պահանջվող ֆինանսները (3-4 միլիարդ դրամ) դեռևս չեն հայթաթվել:
- Արարատան դաշտում դրենաժային համակարգերից շուրջ 1,6 միլիարդ ջրի նվազեցեցման համար նախատեսվող ջրամաբարաշինարարական, պոմպակայանների տեղադրման, ինչպես նաև ջրի շրջանառու համակարգերի ներդնման ծրագրերը չեն կատարվել
- Ջրային կոմիտեի պետական սեփականության ներքո գտնվող 69 ջրամբարներում շուրջ 1,2 միլիարդ խմ ջուր ամբարելու պոտենցիալի և կլիմայի գլոբալ փոփոխությունների հետևանքով գործնականում այդ ջրամբարներում 950 միլիոն խմ ջուր ամբարելու մասին տեսլականը չի կատարվել նախատեսվող ջրամբարների շինարարության ձգձգումների հետևանքով:
- Ախուրյան-Արաքս թևի ջրամբարների խնդիրները դժվար լուծելի են, քանի որ 2019-2020թթ. Թուրքիան իր ստեղծած համակարգի շնորհիվ կարողանում է ամբարել Հանրապետությանը հասնող ջուրը, և դրա հետևանքով Թալինի և Արմավիրի վերին շրջանների տարածաշրջաններն արդեն իսկ կանգնած են ջրի խնդրի առաջ / քանի որ Թուրքիան Ջրի միջազգային համաձայնագիրը չի ստորագրել, ապագա կանխարգելելու համար միջազգային լծակներն այս հարցում չի կարող կիրառվել/:

5. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

2022թ. 4-րդ եռամսյակում մշակել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացրել «Առողջապահության ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագծի որոշ դրույթներ ներառվել են «Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի 2023-2026 թվականների զարգացման ռազմավարության» մեջ, ինչը հաստատվել է ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 174-Լ որոշմամբ[20]:

Որոշման 68-րդ կետում նշվում է, որ կլիմայի փոփոխությունը վատթարացնում է կլիմայի նկատմամբ զգայուն վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների բեռը:

[20] https://www.arlis.am/documentview.aspx?docid=174219

Ջերմաստիճանի աճը, տեղումների քանակի փոփոխությունը և հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների ավելացումը բնակչության առողջության վրա կունենա լուրջ բացասական ազդեցություններ:

Ըստ ռազմավարության միջոցառումների՝ 2025-2026թթ. պետք է մշակվեն առողջության խոցելիության գնահատման և կլիմայի ազդեցության նվազեցման համար հարմարվողականության միջոցառումների ծրագրերը: Նախատեսվում է առողջության առաջնային պահպանման բժշկական օգնություն իրականացնող կազմակերպությունների բուժաշխատողների համար կլիմայի փոփոխության ազդեցությունների և ռիսկերի վերաբերյալ դասընթացների և ուսումնական ձեռնարկների մշակում և կլիմայի փոփոխությամբ պայմանավորված արյան շրջանառության, շնչառական համակարգի, մաշկի չարորակ նորագոյացությունների և վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված դասընթացների անցկացում՝ Սյունիքի, Արմավիրի մարզերում, իսկ Արարատի մարզի գյուղական համայնքների համար՝ մշակել և ներդնել ջերմային ալիքների վաղ նախազգուշացման համակարգեր կլիմայի փոփոխության նկատմամբ առաջնահերթ զգայուն հիվանդությունների համար, ինչպես նաև ՏԻՄ-երի և բնակչության շրջանում կլիմա-առողջություն փոխկապվածության իրազեկվածության բարձրացում:

Առկա բացերը՝

- Կլիմայի ազդեցության նվազեցման համար հարմարվողականության միջոցառումների ծրագրերի մշակման բաղադրիչով միջոցառում նախատեսված չէ:
- Կլիմայի փոփոխության հետ կապված առանձին խոցելի հիվանդությունների իրավիճակի գնահատականի միջոցառումներ նախատեսված չեն:
- Վտանգավոր հիդրոօդերուբանական երևույթների դեպքում /գերբարձր կամ գերցածր ջերմասիճանների դեպքում զգայուն հիվանդություններ ունեցող խմբերի պաշտպանությանն ուղղված միջոցառումներ չեն նախատեսված:
- Կլիմայի նկատմամբ առաջնահերթ զգայուն հիվանդությունների վերահսկման և կանխարգելման համակարգերի հզորացման միջոցառում նախատեսված չէ:
- Վտանգավոր հիդրոօդերութաբանական երևույթների ժամանակ կլիմայական զգայուն հիվանդների և բնակչության վարքագծի ուղեցույցների կամ ձեռնարկների մշակում նախատեսված չէ:

6. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

ՀՀ զբոսաշրջային ոլորտի քաղաքականությունն իրականացնում ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը՝ ի դեմս ՀՀ զբոաշրջության կոմիտեի:

Զբոսաշրջության բնագավառում պետական քաղաքականության նպատակները սահմանվում են «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքով և Զբոսաշրջության զարգացման հայեցակարգով, որը Կառավարության կողմից հաստատվել է 2008թ. փետրվարի 13-ին: Հայեցակարգային փաստաթղթի հիմնական նպատակն է գնահատել և նկարագրել զբոսաշրջային ռեսուրսները, երկրի զարգացման միտումները և հեռանկարները, սահմանել զբոսաշրջության բնագավառում պետական քաղաքականության հիմնական խնդիրները, գնահատել

մարտահրավերները, խոչընդոտները և հատկորոշել պետական քաղաքականության իրականացման հիմնական ուղղություններն ու թեմաները:

Զբոսաշրջության ոլորտն ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ ՀՀ-ում ունի կլիմայական ռիսկ, ուղղակի կախվածություն այլ ոլորտների կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումների կատարողականից: Կլիմայի փոփոխությունը զբոսաշրջության ոլորտում կստեղծի բազմաթիվ խնդիրներ, մասնավորապես՝

- հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթները կարող են որոշ զբոսաշրջային ուղղություններ դարձնել վտանգավոր կամ անհասանելի զբոսաշրջիկների համար
- կարող է հանգեցնել կենդանիների և բույսերի որոշ տեսակների ոչնչացման, ինչը բացասաբար կանդրադառնա էկոտուրիզմի վրա
- կլիմայի փոփոխության հետևանքով օդի և ջրի աղտոտումները կարող են հանգեցնել օդի և ջրի որակի վատթարացման՝ որոշ վայրեր զբոսաշրջիկների համար ավելի քիչ գրավիչ դարձնելով:

Կլիմայի փոփոխությամբ պայմանավորված երկրի կրած տնտեսական հետևանքների առումով հնարավոր են՝

- որոշակի տարածաշրջաններում զբոսաշրջության պահանջարկի նվազում
- հյուրանոցային արդյունաբերության, տրանսպորտի, ծառայությունների և հարակից այլ ոլորտներում աշխատատեղերի կորուստ
- ենթակառուցվածքների նոր պայմաններին հարմարվելու ավելի մեծ ծախսեր
- ավիատոմսերի, կացարանների և այլ ծառայությունների գների անկայունություն:

Կլիմայի փոփոխության հետևանքով ոչ բնակելի տարածքներից հնարավոր է մարդկանց արտագաղթ, բնական ռեսուրսների բաշխման հետ կապված բախումներ, որոնք կարող են լրացուցիչ լարվածություն առաջացնել զբոսաշրջային ոլորտի համար: Հավանական են դառնում ավելի բարդ զբոսաշրջային երթուղիների և միջոցառումների պլանավորումները:

Կլիմայի փոփոխությունը գլոբալ խնդիր է, և դրա լուծման համար պահանջվում են համապարփակ միջոցառումներ: Զբոսաշրջության ոլորտը պետք է ակտիվորեն ներգրավվի կլիմայի փոփոխությանը հարմարվելու գործին՝ իր և շրջակա միջավայրի վրա բացասական հետևանքները նվազագույնի հասցնելու համար:

ՀՀ կառավարությունը նպատակ ուներ 2017-2022թթ. ընթացքում իրականացվող գործողությունների և միջոցառումների շնորհիվ տարեկան զբոսաշրջային այցելությունների թիվը հասցնել առնվազն 3 միլիոնի: Հայաստանում զբոսաշրջության ոլորտի վերաբերյալ վիճակագրական տվյալների շարքերի բացակայությունը, ինչպես

նաև ձմեռային զբոսաշրջության համար հանրապետության լեռնային շրջաններում ձյան շերտի վերաբերյալ ոչ լիարժեք տվյալների շարքերը խոչընդոտում են կլիմայի փոփոխության ազդեցությունների նկատմամբ զբոսաշրջության ոլորտի խոցելիության գնահատմանը:

«Զբոսաշրջության ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը և 2022-2026 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը[21] մշակվել և ներկայացվել ՀՀ վարչապետի աշխատակազմ, սակայն որոշվել է, որ այս որոշման նախագծի որոշ հատվածներ պետք է ներառվեն Հայաստանի զբոսաշրջային ռազմավարության մեջ: Փաստաթղթով առաջարկվում է 18 միջոցառման մշակում, որոնց նախնական գնահատված ֆինանսական արժեքը կազմում է շուրջ 302 միլիոն ՀՀ դրամ: Այս գումարը նախատեսվում է ներգրավել պետական, այլընտրանքային, միջազգային, մասնավոր ֆինանսավորման և պետություն-մասնավոր գործընկերության միջոցով:

Առաջարկներից ամենակարևորը կլիմայի փոփոխության տեսանկունից «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումն է: Մնացած միջոցառումների վերաբերյալ առաջարկներից հետևում է, որ ծրագրի վրա աշխատած մասնագետներն՝ իրենք, բավարար իրազեկված չեն զբոսաշրջության ոլորտում կլիմայի փոփոխության մարտահրավերներին և հետևապես կարիք ունեն ուղեցույցերի և իրազեկման: Միջոցառումներից որևէ մեկը չի ապահովում զբոսաշրջության ոլորտում ԿՓ հարմարվողականության միջոցառումների չափելիությունն ապահովող չափորոշիչների մշակում և դրանց ներդրման մեխանիզմները: Նախագիծն ընդհանուր առմամբ չի ապահովում զբոսաշրջության և հարակից ոլորտների վրա ջերմաստիճանի բարձրացման, մթնոլորտային տարեկան տեղումների նվազման, հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների (ուժեղ քամիներ, հորդառատ տեղումներ, վարարումներ, երաշտ և ջերմային ալիքներ) հաճախականության, ուժգնության, ինտենսիվության և տևողության զգալիորեն աճի պարագայում զբոսաշրջության ոլորտի հարմավորաղականության մեխանիզմներ:

Առաջարկներ

- հիմնական զբոսաշրջային ուղղություններին զուգահեռ նոր ուղիների մշակում
- տարածաշրջաններում զբոսաշրջության պահանջարկի կայուն տեմպի պահպանման նպատակով պահուստային, այլընտրանքային պահանջակի նախագծերի կազմում
- հյուրանոցային բիզնեսի, տրանսպորտի, ծառայությունների և հարակից այլ ոլորտներում աշխատատեղերի կորստի նվազեցման համար աշխատուժի վերաբաշխման սխեմաների ստեղծում,

[21] https://www.e-draft.am/projects/4359

Եզրակացություն

Զբոսաշրջության ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ոլորտում էական ոչինչ չի արվել: ՀՀ Զբոսաշրջության ոլորտի կլիմայի հարմարվողական դիմակայմանն ուղղված միջոցառումներն ինքնուրույն գործել չեն կարող: Այն զուգակցվում է հարակից ոլորտների քաղաքականությունների իրականացման հետ: «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ նախատեսվող օրենքում անհրաժեշտ է ներառել ոլորտի կլիմայկան դիմակայությանը միտված ինչպես ոլորտային, այնպես էլ միջոլորտային համագործակցության դրույթներ: